1369

Լեռկեան

Дом-Музей Ованеса Туманяна
1136

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ.



# ԱՂՒԵՍԸ



Նկարներ Գ. Երիցեանի.



Աղուէսն եկաւ բարձր սարից,
հարցնում էք արաւ լիքը բառից.
մեծ խորոզ է հարկաւոր ինձ.
քաղցած աղուէսն, ագին ծաղիկ:

Աղուէսն հագել քուրքը դեղին,
պառուտ կուզայ չուրքը գեղին.
ջուր կըտրուեց տատիս լեղին
դեղին աղուէսն, ագին ծաղիկ.



Աղուէսն ասաւ պառաւ տատին,
«մըտրիկ չեմ տայ ձեռիդ փետին,
կարօտել եմ բըմփլիկ ճուտին».
անխիս աղուէսն, ագին ծաղիկ:





Աղուէսն եկել, նստել դէզին,
երկար ագին ծըռել վըզին,
աչք է ձըգել մեր խորոզին…
էն գող աղուէսն, ագին ծաղիկ։



Մ՛ին էլ կանչեց տատըս պառաւ,
Ամա՛ն, հասէ՛ք, տարա՛ւ կերա՛ւ…
գըլխիս էս ինչ փորձանք բերաւ
անտէր աղուէսն, ագին ծաղիկ։

Այ իմ խորոզ, կարմիր խորոզ,
ման կուգայիր գոռոզ, գոռոզ.
փետուրդ արաւ ողջ դար ու փոս
էն չար աղւէսն, ագին ծաղիկ:





Աղւէ՛ս, աղւէ՛ս, փոքրիկ գազան,
ոտներըդ կարճ ու խիստ վազան,
շըներն ամեն քեզ չը հասան,
ճարպիկ աղւէս, ագին ծաղիկ:



Գինն է 15 կոպ.



1136